Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտումը և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը

Կատարող՝ «Երևանի «Արևամանուկ» հ.163 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակ՝ Անժելա Լալայան

Ղեկավար՝ Իրինա Պոնոմորենկո

ԵՐԵՎԱՆ- 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **2**

ԳԼՈՒԽ1.ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 4

1.1 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 4

1.2 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ **5**

1.3 ԿԶԱՊԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՆՈՒՀ-ՈՒՄ 8

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

Ներածություն

Ներառական կրթությունը օրեցօր մեծ կարևորություն է ձեռք բերում ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Ընդ որում նշանակալի ուշադրություն պետք է դարձնել ոլորտում աշխատող մասնագետների վերապատրաստումներին, քանի որ ներառական կրթությունը լինելով կրթական գործընթացի կարևոր բաղադրիչ ունի յուրահատկություններ, որոնց մասնագետները պետք է կարողանան տիրապետել, որպեսզի կարողանան ներառել ԿԶԱՊԿ ունեցող սաներին : Չնայած ներառական կրթության զարգացմանը, այնուամենայնիվ մարդիկ շարունակում են այլ վերաբերմունք ցուցաբերել ԿԶԱՊԿ ունեցեղ երեխաներին, այդ իսկ պատճառով առավել մեծ կարևորություն է ձեռք բերում ներառական կրթության, ներառական կրթության կարիք ունեցող երեխաների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը և գործնականում կիրառումը: Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս տարբերվող երեխային հայտնվել իր հասակակիցների միջավայրում և նրանց հետ միասին ստանալ երեխայի վաղ զարգացման համար խիստ կարևոր նախադպրոցական կրթություն: Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն: Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները

սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ներկայումս ՀՀ-ում իրականացվում է ներառական կրթություն ուսումնական հաստատություններում: Սահմանափակ կարողություններով երեխաները ներառվում են մանկապարտեզ, հանրակրթական դպրոց: Մինչդեռ այդ երեխաները դժվարություններ են ունենում նախադպրոցական ծրագրի յուրացման հարցում: Ներառական կրթություն իրականացնող նախադպրոցական ուսումնական հաստատությունները պետք է պատրաստ լինեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան երեխային մասնակցել ցանկացած գործունեության, համագործակցել, ուսումնասիրել, խաղալ , սովորել իր հասակակիցների հետ միասին:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և բացահայտել սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը :

Աշխատանքի խնդիրներն են՝

1.Հիմնավորել ներառական կրթության կարևորությունը ՆՈՒՀ-ում,

2.բացահայտել ԿԶԱՊԿ ունեցող երեխաների առանձնահատկությունները,

3. ներկայացնել ԿԶԱՊԿ գնահատման տեսակները ՆՈՒՀ-ում

Հետազոտության մեթոդները՝ դիտում, զրույց, տվյալների վերլուծություն:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական և գործնական մասերից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից, համակարգչային շարվածքով կազմում է 18 էջ:

Գլուխ 1. Մասնագիտական գրականության վերլուծություն

1.1 Ներառական կրթության հիմքերը ՀՀ-ում

Հայ ժողովուրդը պատմության մեջ հայտնի է խոցելի խմբերի հանդեպ իր ունեցած մարդասիրական մոտեցումներով: Հնում եկեղեցին իր վրա է վերցրել հաշմանդամներին և կարիքավորներին կրթելու, հոգ տանելու և ներառելու մեծ գործը: Սակայն խորհրդային տարիներին պատկերը փոխվեց. բացվեցին հատուկ հաստատություններ, և մարդիկ առանձնացվեցին հասարակությունից: Ընտանիքները տարիներով թաքցնում էին նման երեխաների գոյությունը՝ համարելով այն ամոթալի դժբախտություն: Բարեբախտաբար, այժմ պատկերը բավականին այլ է, և զգալի են դրական տեղաշարժերը հասարակության ընկալման և վերաբերմունքի մեջ:

Անշուշտ, ոլորտում նշանակալի բարեփոխումներ են կատարվել՝ շնորհիվ մի շարք հասարակական, այդ թվում միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Առաքելություն Արևմուտք, Հույսի կամուրջ), ինչպես նաև գործին նվիրյալ անհատների և ծնողների, ովքեր պայքարել են իրենց երեխաների կրթության իրավունքի և կյանքի որակի բարելավման համար: Հայաստանի կառավարությունը ևս դրական քայլեր է ձեռնարկել երեխաների կրթության իրավունքն իրացնելու նպատակով, այս փաստն է վկայում ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության[1]: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի

[1] ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=946

օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

- **Ներառական կրթությունը** յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:
- **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը**՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձն է, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ:

Ներառական կրթությունն այժմ համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Ներառական կրթության զարգացմանը կարելի է աջակցել գործնական տարբեր եղանակներով. *դրական վերաբերմունքով, ներառական ուսումնական միջավայր ստեղծելով, վաղ միջամտությանը նպաստելով, դրական դերային մոդելներ պրոպագանդելով, համապատասխան քաղաքականության մշակմանն աջակցելով և այլն:*[2]

1.2 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ընդհանուր կրթության այնպիսի գործընթաց, որը մատչելի է կրթության առանձնահատուկ պայմանների

[2] ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Գյումրի «ԷԼԴՈՐԱԴՈ» հրատարակչություն 2017

կարիք ունեցող սովորողների համար։Այսինքն արդյունքում կրթությունը դառնում է մատչելի,հասանելի բոլոր այն սովորողների համար, որոնք ունեն մտավոր կամ ֆիզիկական խնդիրներ։Ներառական կրթության մեթոդաբանության համաձայն, հատուկ կարիքներ ունեցող սովորողները, տարբեր պահանջմունքներ ունեցող անհատներ են, որոնց համար հանրակրթական ուսումնական հաստատությունների պայմաններում պետք է կազմակերպվի ուսուցման ճկուն համակարգ, ընտրվեն նրանց կարողություններին մատչելի մեթոդներ և առավելագույնս ապահովվի նրանց ուսուցման և զարգացման որակը։

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր երեխաների հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար։

Նախադպրոցական կրթության պայմաններում ներառական կրթության հիմնական նպատակը բոլոր երեխաների հանդեպ հարգանքի ձևավորումն է՝ ճանաչելով և գնահատելով նրանց բազմազանությունը։ Երեխաները, կրթվելով բազմազանության միջավայրում, ունենում են տարաբնույթ ձեռքբերումներ, դրական լիցքեր են ստանում մեկը մյուսից, լրացնում են միմյանց՝ խճանկարի հավաքվող պատկերի սկզբունքով կերտելով շրջապատող աշխարհի վերաբերյալ նոր, ամբողջական պատկեր։ Բազմազանությունը կարող է դրսևորվել տարբեր կերպ և տարբեր մակարդակներում՝ սկսած ազգային կամ կրոնական փոքրամասնություններից, վերջացրած զարգացման խանգարումներով կամ օժտվածությամբ։ Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս տարբերվող երեխային հայտնվել իր հասակակիցների միջավայրում և նրանց հետ միասին ստանալ երեխայի վաղ զարգացման համար խիստ կարևոր նախադպրոցական կրթություն։ Երեխաները սովորում են՝ հաղորդակցվելով միմյանց հետ, ճանաչում են աշխարհը, ընկալում այն իրենց երևակայության սահմաններում սավառնող ողջ գույներով ու երանգներով, իսկ մանկավարժն այս գործընթացում դառնում է պարզապես խաղընկեր և ուղղորդող։ Այս ներառական

միջավայրում կարևոր է գիտակցել բոլոր սովորողների եզակի և փոփոխվող կարիքներին արձագանքելու անհրաժեշտությունը:

Նախադպրոցականի՝ ներառական միջավայրում զարգացումը և կրթությունը հնարավորություն են տալիս երեխաներին սովորել և զարգանալ մանկավարժների, ծնողների և ընտանիքի աջակցությամբ: Մանկավարժներն առաջնորդվում են ինչպես նախադպրոցական մանկավարժության մեթոդներով և սկզբունքներով, այնպես էլ՝ առանձին երեխաների հետաքրքրություններով, կարիքներով և կարողություններով:

Ներառական կրթության զարգացմանն օժանդակում են մանկավարժները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել:

Ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ, սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Ներառական կրթության հիմնական նպատակը, որպեսզի ինչ-ինչ խնդիրներ ունեցող երեխաները սովորեն համայնքային հաստատություններում՝ մյուս բոլոր երեխաների հետ միասին: Իսկ սրա նատակը այն է, որ ներառված երեխան չմեկուսանա, լինի հասարակության լիիրավ անդամ: Ասելով ներառված երեխա, հասարակությունը, և որ ավելի վատ է մանկավարժները, ծնողները հասկանում են միմիայն հիվանդ երեխա, շատերը նույնիսկ փորձում են հեռու պահել իրենց երեխաներին ներառված երեխայից: Ներառական կրթության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է, որը հենվում է յուրաքանչյուր երեխայի անահատական կարիքների գնահատման և կրթության պրոցեսին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման պահանջի վրա: Ներառական կրթությունը հոգ է տանում բոլոր սովորողների մասին, հատկապես նրանց, ովքեր հաճախ զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով հատուկ կարիքներով սովորողներին, հաշմանդամներին, էթնիկ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և այլոց: Ներառական կրթության իրականացման ճանապարհին կարևորվում է բազմամասնագիտական թիմի

ստեղծումը, որի մեջ ներգրավվում է երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ՝ ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ,երեխայի ծնողը և համակարգողը: Այս ծրագրում ամեն մեկն ունի իր յուրովի աշխատանքը: Յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները: Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ուղի և հնարավոր միջոց՝ սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար:

1.3 ԿԶԱՊԿ Գնահատման տեսակները ՆՈՒՀ-ում

Հայաստանի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքների գնահատման ոլորտում ծավալված արմատական բարեփոխումների շրջանակում վերջերս հատուկ ուշադրություն է դարձվում ներառական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների մանկավարժների համար այն ավելի համապատասխան և պիտանի դարձնելուն: Գնահատման նոր համակարգը մշակվել և ներկայումս կիրառվում է Հայաստանի տարբեր մարզերում: Բարեփոխումների իրականացման համար հիմք են հանդիսացել Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգումը երեխաների և երիտասարդներդների համար (ՖՄԴ-ԵԵ, ԱՀԿ, 2007) և Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին (ԿՀԱԻ), որը ՀՀ-ն վավերացրել է 2010 թ.-ին: Մինչև 2013թ.-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքի գնահատումը հիմնված էր ավանդական բժշկական մոդելի վրա, կիրառելով զուտ ախտաբանական մոտեցում: [3]

Ներառական կրթության համակարգում առանձնահատուկ կարևոր են երեխայի մասին տեղեկատվության փոխանակումն ու ճշգրիտ գնահատումը, ուստի

[3] ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ,ԴԱՍԱԳԻՐՔ ՅՈՒՆԻՍԵՖ

մանկավարժական կազմը պետք է կարողանա գնահատել և ամեն ինչ կազմակերպել՝ ելնելով երեխայի կարիքի վերաբերյալ տեղեկությունից: Մեր աշխատանքն է հասկանալ՝ ինչ է պետք երեխային, և ինչ կարողություններ ունի: Կրթական կարիքի ճշգրիտ գնահատումը ենթադրում է արդյունավետ միջամտություն, որն էլ նպաստում է կրթական նպատակների իրագործմանը: Պետք է հստակ տեսնել, թե որտեղ է երեխան և որոշել, թե որն է հաջորդ քայլը: Գնահատումը կարելի է և պետք է կատարել ամեն օր, ամեն շաբաթ, քանզի միայն այս ձևով կարող ենք ճանաչել երեխայի հնարավորությունները: Պետք է տեսնել, թե որտեղ է երեխան, պետք է կարողանալ «կարդալ» երեխային և անհրաժեշտության դեպքում փոփոխել դասավանդման եղանակները, սակայն մինչ աշակերտին գնահատելը պետք է գնահատել դասի պլանը, որն ունի 2 չափանիշ՝ ուսումնական պլանի բարդության աստիճանը և միջավայրի կազմակերպումը: Պետք է գնահատել, թե որքանով է առաջադրանքն արդյունավետ աշակերտի համար, որքանով է մատչելի և համապատասխան վերջինիս կարողություններին[4]:

Երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան չի հասցնում ծրագիրը և զգալիորեն ետ է մնում հասակակիցներից, մենք սկսում ենք մտածել, որ երեխան չի կարողանում սովորել և ավելի քիչ ենք ընդգրկում դասապրոցեսում: Իրականում կրթական խնդիրների մեծամասնությունը պայմանավորված է աշակերտի հանդեպ մեր ակնկալիքների և նրա ընդունակության անհամապատասխանությամբ: Ընդ որում ակնկալիքները կարող են երեխայի ընդունակություններից ինչպես բարձր լինել, այնպես էլ ցածր: Ցածր սովորաբար լինում են, երբ երեխայի տարբերությունը հասակակիցներից ակնհայտ է և արտաքինից տեսանելի: Պատկերը լիովին փոխվում է, երբ ստուգում ենք երեխայի իրական կարողությունները, գրանցում իրական խնդիրը և նոր միայն առաջադրանքը կառուցում՝ հիմնվելով երեխայի կարիքի մասին մեր գիտելիքի վրա: Սա առանցքային մոտեցում է, քանի որ, եթե ճիշտ մոտեցմանը զուգահեռ իրականացվի գնահատում, ապա ակնհայտ կդառնա, որ աշակերտի կողմից գրանցվել է տեղաշարժ, ինչը շատ կարևոր է ինչպես նրա, այնպես էլ ուսուցչի

[4] Ներառական կրթությունը գործնականում ՈւՁ ,Հեղինակ՝ Սյուզաննա Պետրոսյան

համար: Շատ հաճախ, երբ երեխան զարգացման որևէ առանձնահատկություն է ունենում, ուսուցիչներից շատերը պիտակավորում են որպես «խնդիրով երեխա» և հակվում են ընդհանրացնելու այդ «խնդիրը», ինչն էլ ավելի է բարդացնում աշխատանքը: Իրականում ամեն ինչ շատ ավելի հեշտ կլինի, եթե փորձենք վերհանել այն խնդիրները, որոնք խանգարում են երեխայի ուսումնառությանը և դասապրոցեսին ներգրավմանը, պարզենք այն հնարավորություններն ու կարողությունները, որոնք երեխան ունի, ապա վերլուծենք և գտնենք տարբերակներ դասապրոցեսը բոլորի համար արդյունավետ դարձնելու համար:

Երեխայի Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն (այսուհետ՝ Գնահատում) իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1) երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ.

2) սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը.

3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների (այսուհետ՝ ՄՀ ծառայություն) մակարդակը, ծավալները և տևողությունը:

5. Գնահատումն իրականացվում է երեք մակարդակներում՝

1) Նախադպրոցական մակարդակի Գնահատում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՆՈՒՀ) մանկավարժական աշխատողների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի (այսուհետ՝ ՄՀ աջակցության խումբ) կողմից (առկայության դեպքում).

2) Տարածքային մակարդակի Գնահատում՝ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) մասնագետների կողմից.

3) Հանրապետական մակարդակի Գնահատում՝ բողոքարկված դեպքերի գնահատում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (այսուհետ՝ ՀՄԿ) մասնագետների կողմից:[5]

ԿԶԱՊԿ ունեցող սաներին ուսումնական գործընթացում հաջողությամբ ներառելու համար անհրաժեշտ է նրան գնահատել որպես անձնավորություն՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով ու առանձնահատուկ կարիքներով:

Գնահատումը պետք է իրականացվի սովորողի համար հնարավորինս սովորական պայմաններում և հնարավորություն ընձեռի նրան դրսևորելու իր ներուժն ու արտահայտել գիտելիքները:

Գնահատման ընթացքում անհրաժեշտ է պարզել՝

• Ի՞նչ կարող է անել սովորողը և ի՞նչ է անում:

•Ո՞րն է նրա զարգացման, հմտությունների, կարողությունների և գիտելիքի այդ պահին առկա մակարդակը:

• Ունի՞ արդյոք զարգացման հապաղումներ:

• Կարիք ունի՞ արդյոք օժանդակ ծառայությունների:

Մինչև երեխաներին հետազոտելը, գնահատելը երեխայի հետ աշխատող թիմը պետք է կատարի դիտարկում: Դիտարկումն անցկացվում է գործունեության բոլոր ձևերում՝ ուսումնական, խաղային, աշխատանքային: Աշակերտի զարգացման համար պատասխանատու և շահագրգիռ մեծահասակները մշտապես և կանոնավոր կերպով պետք է դիտարկեն նրան: Դիտարկումը դառնում է ավելի ամբողջական և անկողմնակալ, երբ համադրվում են մանկավարժների, մասնագետների (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան), երեխայի ծնողների դիտարկումները, որոնց արդյունքում ի հայտ եկած օրինաչափությունները հնարավորություն են տալիս կատարելու առավել ստույգ և արդյունավետ եզրահանգումներ: Նախադպրոցական կրթության պայմաններում շատ կարևոր է երեխաներին դիտարկելը: Հետաքրքրությամբ և ուշադրությամբ

[5] ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ N 34-Ն ՀՐԱՄԱՆ 07 սեպտեմբերի 2022 թ.

երեխաներին դիտելը և լսելը թույլ է տալիս ավելին իմանալ նրանց մասին: Մանկավարժները սովորում են, թե ինչն է երեխաներին հետաքրքրում, ինչն է ժպիտ առաջացնում նրանց դեմքին, տեղեկանում են այն մասին, թե ինչ գիտեն նրանք և ինչ կարող են անել: Հատկապես այս տարիքում շատ կարևոր է հասկանալ, թե ինչն է մղում երեխային սովորել և զարգանալ: Դիտարկումը հաճախ դիտվում է որպես նախադպրոցական տարիքի երեխաների գնահատման ամենապարզ, բայց ամենաարդյունավետ մեթոդներից մեկը: Մանկավարժի համար երեխային դիտարկելը սկսվում է այն բանից, թե ինչպես է յուրաքանչյուր երեխա վարվում, սովորում, արձագանքում նոր իրավիճակներին և փոխազդում ուրիշների հետ: Այս տեղեկատվությունը կարևոր է, քանի որ այն օգնում է մանկավարժներին բարելավել իրենց պարապմունքները՝ բավարարելով փոքրիկ սովորողների կարիքները: Դիտարկումը թույլ է տալիս հասկանալ, թե ինչն է հետաքրքրում երեխային և ինչպես է նա սովորում (Ի՞նչ գործողություններ են նրան հետաքրքրում: Ինչպե՞ս է նա արձագանքում փոփոխություններին և սենյակի կարգուկանոնին: Ինչպե՞ս է նա արձագանքում որոշակի գործողություններին և/կամ միջավայրին): Այսպիսով՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները դիտարկում և բացահայտում են երեխաների կարողություններն ու հնարավորությունները նրանց կարիքները գնահատելու, զարգացումը խթանելու, և, որ ամենակարևորն է, կրթությանն աջակցելու համար:[6]

Դիտարկողը պետք է՝

- լինի անաչառ,
- նստի խաղասենյակի մի անկյունում,
- չխոսի, չմիջամտի ուսումնական գործնթացին, երեխայի ինքնուրույն խաղին,
- բացահայտի այն ոլորտները, որտեղ անհատական մոտեցման կարիք կա,
- կատարի գրառումներ:

---

[6] Ինչպես խթանել ճերառումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում ,Սվաջյան Ա.Հ, Ազատյան Թ.Ցու Երևան – 2020թ.

Դիտարկումը պետք է լինի նպատակաուղղված և պլանավորված: Անհրաժեշտ է ձևակերպել դիտարկման հստակ նպատակներ (ի՞նչ և ինչի՞ համար ենք դիտարկում): Երեխան չպետք է զգա, որ ինքը գտնվում է ուշադրության կենտրոնում, որպեսզի իրեն պահի բնական ձևով, և հավաստի ու ճշգրիտ լինեն դիտարկման արդյունքները:

Դիտարկման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեխայի՝

ա) ակտիվությանը և մասնակցությանը տվյալ պարապմունքին,

բ) կարգուկանոնին ենթարկվելուն,

գ) մանկավարժի հրահանգները, հանձնարարությունները ըմբռնելուն, կատարելուն,

դ) աշխատելու տեմպին (արագ, դանդաղ),

ե) ուշադրության կենտրոնացվածությանը,

զ) խմբում սովորողների հետ հաղորդակցվելու կարողությանը, ընդհանուր վարքագծին:

Ուսումնական գործընթացի տարբեր փուլերում պետք է պարբերաբար դիտարկել երեխային: Դա թույլ կտա կատարել առաջընթացի վերլուծություն: Դիտարկման ժամանակ ստացված տվյալները և արդյունքները պետք է գրանցել:

Քանի որ գոյություն չունի ընդհանուր համաձայնեցված մոտեցում ԿԶԱՊԿ-ի սահմանման համար, հետևաբար չկա նաև այս հասկացությունները գնահատելու և չափելու միասնական եղանակ: Պետությունները տարատեսակ գործընթացներ են սահմանել՝ որոշելու, թե ովքեր են իրավասու ստանալ հատուկ կրթական ծառայություններ, իսկ ովքեր՝ ոչ: Այդ որոշման կայացման գործընթացը չափազանց տարողունակ է, կախված է բազմաթիվ մասնագետներից և իրականացվում է հստակորեն տեղաբաշխված ռեսուրսների միջավայրում:

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ բոլոր մոտեցումներում առանձնացվում է հետևյալ դասակարգումը

- հաղորդակցում և փոխազդեցություն
- իմացական ոլորտ և ուսուցում
- սոցիալական, հուզական և հոգեկան առողջության դժվարություններ

• զգայական և/կամ ֆիզիկական կարիքներ։

Յուրաքանչյուր հասկացության մեջ առանձնացվում են կոնկրետ կարիքների և զարգացման առանձնահատկությունների տեսակները։[7]

[7] Ներառող դասավանդում մեթոդական ձեռնարկ Երևան 2023
Հեղինակներ՝ Ա. Հ. Ավագյան, Լ. Ա. Մնացականյան, Ի. Պոնոմորենկո

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Աշխատելով «Երևանի «Արևամանուկ» հ.163 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հնարավորություն եմ ունեցել շփվել և աշխատել մտավոր, խոսքի և հաղորդակցման,շարժողական ոլորտներում դժվարություններ ունեցող երեխաներիի հետ։

Ն.Մ.-ն մանկապարտեզ ընդունվեց 3 տարեկանում։ Երկչոտ, չշփվող, դանդաղ շարժվող, ուշադրությունը չկենտրոնացնող, նյութից հեշտությամբ շեղվող երեխա էր, նկատվում էր խոսքի և ընկալման հապաղում։ Խնդրի մասին տեղեկացվել է մանկապարտեզի տնօրենությանը և բազմամասնագիտական խմբին, որոնց ճկուն և հմուտ գործողությունների արդյունքում երեխան վկայագրվել է/ խոսք ր հաղորդակցում,մտավոր թեթև խանգարում/։ Երեխան դիտարկվել է որպես անհատ և հենվելով նրա ուժեղ կողմերի վրա՝ սկսվել է համատեղ աշխատանքը։ Որպես դաստիարակ , ցանկացած աշխատանք կատարելուց Ն.Մ-ի համար աշխատանքը կրկնվել և ցուցադրվել է մի քանի անգամ, բացատրվել, ցույց տրվել գործողությունները,պատասխան լսելու դեպքում տրվել է բանավոր քաջալերանք։Փորձեր է կատարվել հասկանալու համար, ,թե ի՞նչ է սիրում,զրուցել եմ նաև մայրիկի հետ և հիմնականում կատարվել է այն գործողությունները , որոնք Ն.Մ.-ն շատ է սիրում ։ Պարապմունքների ժամանակ Ն.Մ-ի համար ավելի շատ ժամանակ է տրամադրվել, բացատրելիս ցույց է տրվել այն իրերը , որոնց մասին խոսվել է / ափսե, բաժակ, , տիկնիկ, մեքենա,միրգ, բանջարեղեն/ ։ Գործողությունները բաժանվել են ավելի փոքր առաջադրանքների /պարզեցվել են/։Պարապմունքների ժամանակ երեխան նստել է առաջին նստարանին՝ ուշադրությունը և տեսադաշտը պահելու համար, աշխատանքը տարվել է հիմնականում *«Հարց ու պատասխան», «Զրույց», «Ցուցադրման»* մեթոդներով։ Կիրառել ենք նաև խաղային մեթոդը, քանի որ խաղը հնարավորություն է ընձեռնում բացահայտել բոլոր երեխաներին՝ անկախ զարգացման առանձնահատկությունների և դժվարությունների առկայությունից։

Տարվա ավարտին՝ ամփոփելով աշխատանքը, ի ուրախություն մեզ, Ն.Մ-ի մոտ արձանագրվել դրական դինամիկա։

Ծնող- երեխա- դաստիարակ եռանկյունու աշխատանքը տվեց իր դրական արդյունքը։

Հաջորդ տարի արդեն աշխատանքը շարունակվել է ԱՈՒԶՊ պլանով, դրվել է տարեկան նպատակ,ինչպես նաև կարճաժամկետ նպատակներ, անհրաժեշտ հարմարեցումներ և մանկավարժահոգեբանական խմբի հետ միասին հասել դրանց իրագործմանը։ Այժմ Ն.Մ-ն արդեն ավագ խմբի սան է, և դիմել ենք Երևանի N1 ՏՄԱԿ-ին երեխային վերագնահատելու համար և կարծում ենք, որ ի ուրախություն բոլորիս, բավականին լուրջ առաջընթաց ունենք և նրա կարիքը չի գնահատվի։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացնելով մասնագիտական գրականության վերլուծություն և ելնելով սեփական ԿԶԱՊԿ ունեցող սանի հետ ունեցած փորձառությունից կարելի է եզրակացնել, որ

- ներառական նախադպրոցական կրթությունը պետք է ապահովի յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ համապատասխան պայմաններ: Սա նշանակում է, որ մանկավարժները պետք է գիտելիքներ ունենան այն մասին, թե ինչ կարող է և դեռ չի կարող անել յուրաքանչյուր երեխա՝ ելնելով ինչպես երեխաների զարգացման տարիքային օրինաչափություններից, այնպես էլ՝ կոնկրետ երեխայի զարգացման ընթացքից: Կարևոր է, որ մանկավարժներն իրենց աշխատանքները պլանավորելիս անպայմանորեն հավշի առնեն այս գիտելիքները և տեղեկատվությունը:
- Միևնույն ժամանակ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները պետք է տիրապետեն այս տարիքի երեխաների հետ կիրառվող մանկավարժական մոտեցումներին, մեթոդներին ու հնարներին և կարողանան ճկուն կերպով ընտրել և կիրառել դրանք:
- Նախադպրոցական ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար իր զարգացման առանձնահատկություններին համապատասխան անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է, որին կարելի է հասնել ժամանակին ԿԶԱՊԿ գնահատման, սանի առանձնահատկություններին՝ ուժեղ և թույլ կողմերի և դրսևորումներին՝ ճանաչման և ժամանակին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու արդյունքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.ԻՆՉՊԵՍ ԽԹԱՆԵԼ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՎԱՋՅԱՆ Ա.Հ, ԱԶԱՏՅԱՆ Թ.ՅՈՒ ԵՐևԱՆ – 2020Թ

2.ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ N 34-Ն ՀՐԱՄԱՆ 07 սեպտեմբերի 2022 թ.

https://www.arlis.am/documentview.aspx?docid=168480

3. ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=946

4 ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԵՐԵՎԱՆ 2023
ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝ Ա. Հ. ԱՎԱԳՅԱՆ, Լ. Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Ի. ՊՈՆՈՄՈՐԵՆԿՈ

5.ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ՈՒՉ , ՍՅՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

6. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԽՈՒՄԲ, ԳՅՈՒՄՐԻ, «ԷԼԴՈՐԱԴՈ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2017

7 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ,ԴԱՍԱԳԻՐՔ ՅՈՒՆԻՍԵՖ